

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԵՌԱՐԺԵՔ ԲԱՌԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
(համաժամանակյա ֆեմոլոգյան փորձ)

1. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լեզվի բառերն ունեն բառական իմաստ և քերականական արժեք: Բառիմաստը բառային նշանի բովանդակային կողմն է՝ նշանակելին, իսկ քերականական արժեքը՝ նշանակությունը, ներառում է բառի ձևաբանական ու շարահյուսական այլևայլ հարաբերություններ, իմաստաբանական առումով բառայինը և քերականականը պատճառահետևանքային հարաբերությամբ սերտորեն կապված են միմյանց հետ. բառայինը հաճախ թելադրում է քերականականի բնույթը. խոսքիմասային իմաստը բառայինին մակաբերված քերականական (ձևաբանական) իմաստավորում է¹:

Լեզվի տարժամանակյա կտրվածքում բառիմաստը ծավալի առումով կարող է ընդլայնվել, նեղանալ, ենթարկվել անցման կամ շրջման: Բառիմաստային փոփոխությունները երբեմն առաջ են բերում խոսքիմասային իմաստի ու արժեքի (մասնակի կամ լիակատար) տեղաշարժեր: Պատճառահետևանքային փոփոխությունների այս գործընթացը ընդգրկում է լեզվական համակարգի տարբեր մակարդակներ. բառիմաստային մակարդակում կատարված փոփոխությունները պայմանավորում են բառույթի խոսքիմասային արժեքի տեղաշարժերը ձևային ձևաբանականում և դրա իրացումը՝ շարահյուսական մակարդակում: Բառիմաստի և խոսքիմասային արժեքի հարաբերակցված փոփոխությունները տեսականորեն կարելի է խմբավորել՝ տարբերակելով բառիմաստի ընդլայնումն ու արժեքի երկփեղկումը, բառիմաստի նեղացումն ու արժեք(ներ)ի կորուստը, բառիմաստի անցումն ու արժեք(ներ)ի փոխանցումը²:

Բառիմաստի ընդլայնման անմիջական հետևանքը բառի բազմիմաստությունն է, որ սինկրետիկ ձևով արտահայտվում է միևնույն բառաձևում: Լեզվի տարժամանակյա կտրվածքում, սակայն, բառույթի տրոհված իմաստները տարբերակվող բառաքերականական հատկանիշներով կարող են ստանալ քերականական (ձևաբանական) արտահայտություն՝ խոսքիմասային արժեքներ, Փաստորեն միևնույն բառույթն իր իմաստային կառուցվածքով բազմիմաստ է, խոսքիմասային նշանակությամբ՝ տարարժեք: Այդպիսի միավորները կոչվում են խոսքիմասային տարարժեք բառեր, իսկ քերականական իրողությունը՝ խոսքիմասային տարարժեք բառեր: Խոսքիմասային տարարժեք բառերը համածին կազմություններ են, որոնց առաջացման պատճառն իմաստափոխությունն է: Իմաստափոխության՝ բառերի խոսքիմասային արժեքի վրա ունեցած ազդեցությունը կախման մեջ է տվյալ լեզվի քերականական կառուցվածքից:

Խոսքիմասային տարարժեք բառերը հավասարապես հանդես են գալիս մեկից ավելի ձևաբանական արժեքներով այն բանի հետևանքով, որ հայերեն բառերը տարբեր խոսքիմասային իմաստների համար գերազանցապես հատուկ ձևավորում չունեն, ուստի դրանք առանց ձևակազմական փոփոխության շարահյուսական մակարդակում ստանում են տարբեր դերեր: Այդ

1 Հմմտ. Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 243:

2 Տե՛ս Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985, էջ 20—26:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 32—33:

կարգի բառերը, որպես բառարանային միավորներ, ընադիրը դուրս, ընդհանուր առմամբ համատեղում են տարբեր խոսքիմասային իմաստներ ու արժեքներ, սակայն դրանց երկփեղկված բառիմաստներն ու խոսքիմասային արժեքները հստակ տարբերակվում են առանձին կիրառության մեջ. դրանց իմաստաբանում տեղի է ունենում շարահյուսական կիրառության մեջ, այլ երեւոյսացած՝ ձևաբանական արժեքի բաշխումը (ДНСТРИБУЦИЯ) կատարվում է շարահյուսական մակարդակում, քանի որ իմաստազատիչ մյուս գործոնները տվյալ դեպքում չենգործում են:

Ընդհանրապես հայերենի խոսքիմասային տարարժեք բառերը կարելի է խմբավորել՝ ելնելով տվյալ բառույթի՝ ձևաբանական արժեքների գործառական հաճախականությունից: Ըստ այդմ, կատանանք խոսքիմասային երկարժեք, եռարժեք և բառարժեք բառեր⁴:

Բառիմաստի սլատմական քննությունը ցույց է տալիս, որ իմաստաարձեքային անշարժները երևույթը տարածելի է նաև խոսքիմասային տարարժեք բառերի բաժաններում. բառույթի երկփեղկված արժեքներից որևէ մեկը ծագալի առումով ևս կարող է զանազան փոփոխություններ կրել, որ կարող է հանգեցնել ինչպես արժեքներից որևէ մեկի կորուստի, այնպես էլ նոր արժեքի ավելացման:

Հին հայերենի շրջանակներում խոսքիմասային տարարժեք բառերի քննությունը կարելի է կատարել նրդու հայեցակետով համաժամանակյա և տարժամանակյա: Համաժամանակյա քննությանը առանձնացվում է տարարժեք բառերի այն շերտը, որ հին հայերենը ժառանգել է լեզվի դարգացման նախագրային շրջանից: Կարելի է ենթադրել, որ այդ կարգի բառերը աղոհված իմաստներն ու արժեքները ձևաք են բերել նախաքրային հայերենի այսպես կոչված սինկրետիզմի շրջանում, երբ միևնույն քերականական ձևով արտահայտվում էին մեկից ավելի քերականական իմաստներ: Հին հայերենում կան զգալի թվով բառեր, որոնք բառիմաստով և խոսքիմասային արժեքով արդեն երկփեղկված են: Այսպես, առդար-ը V դարի մատենագրության մեջ գործածվում է երեք՝ ածական||գոյական||մակբայ արժեքներով: Հմմտ. 1. «ուղղամիտ, անաշու, անմեղ, օրինալոր» (ած.). Կարգալ առ առդար դատարն (Ա. Մակ. ԺԲ 5): Բան ահեղ խոռվեցույանէ զսիրտ առն առդարոյ (Առակ. ԺԲ 25): 2. «արդարություն» (գոյ.). Որչափ էր հնար, փախեցայք լաւելորդ և ի պաճուճեալ բանից. միայն դհոտ երթալով ըստ կարողութեան... զառդարոյն և զճմարտի (Խոր. 198): 3. «արդարացի, ճմարտությամբ, հավատարմությամբ» (մկբ.). Թէ արդարեւ ի վերայ դորին բանից պնդեալ կաս՝ ապա առդար ասէիր (Փարպ. 115): 9 է քո այո. զայդ առդար ասացեր (Յովհ. Դ. 18):

Հին հայերենի շրջանակներում, փաստորեն, առդար-ի խոսքիմասային տարարժեքությունը համաժամանակյա իրողություն է:

Տարժամանակյա մոտեցման դեպքում հիմք ընդունելով «Աստվածաշնչի» ու V դարի պրական հուշարձանների բառային կազմը և հետևելով հա-

⁴ Դեռևս Թրակացին ու նրա մեկնիչները նկատել են, որ որոշ բառեր հանդես են գալիս մակբայի և նախադրության (ըստ. զկնի, յեռ). շաղկապի և նախադասության (վառն, յաղագն, քան) խոսքիմասային իմաստներով (չնայած հին հունարենում սրանց հոմանիշների մեծ մասնունի ձևակազմական տարբերություններ) (Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 30—37):

Գրարարի քերականներն այս կարգի բառերն անվանել են «միջակք» և մեծ մասամբ անդրադարձել խոսքիմասային երկարժեք բառերին ու դրանց գործածությանը (տե՛ս Գ. Աւետիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 194, 228, 535, Ա. Բագրատունի, Հայերեն քերականութիւն ի պէտս դարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 37—38, 223—224, Մ. Չամչեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Շուշի, 1859, էջ 165—166, 288—289): Շատ հազվագեպ նշումներ կան նաև եռարժեք բառերի վերաբերյալ (տե՛ս Մ. Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի Հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 366, Գ. Աւետիքեան, նշվ. աշխ., էջ 129):

ջորդ դարերում դրանց կրած իմաստաբարձքային փոփոխություններին՝ կարելի է առանձնացնել տարածքային բառերի մեկ այլ շերտ, որ ձևավորվել է լեզվի զարգացման հին հայերենյան գոյավիճակում՝ պայմանավորված բառիմաստի ընդլայնման գործոնով⁵։ Այսպես, ձգի բառը V դարում համատեղում է գոյականի և մակբայի արժեքները։ Հմմտ. 1. «նվեր, պարգև, ընծա» (գոյ.)։ Մեծ է պահպանությունը խաչի ձգի... արդ մի վասն ձգյն արհամարհեր դու զդրոշմն, այլ վասն այսորիկ առաւել ևս մեծարեա դու զբարեբարն (Կռ. ԺԳ)։ 2. «գուր, ընդունայն, անվարձ» (մկբ.)։ Միթէ ձգի՞ պաշտիցէ լուսն զՏէր (Յովբ. Ա 9)։ 2ի ձգի զԱւետարանն Աստուծոյ աւետարանեցի (Ք. Կորն. ԺԱ 7)։

VII—VIII դդ. արդեն Ղևոնդ Պատմիչը և Անանիա Շիրակացին այն գործածում են «անվարձահատույց, անվարձ» ածականական նշանակությամբ։ Հմմտ. Գերեհաց գերեղարձ առնէր և ամենեցուն շնորհէր զյանցանս նոցա ձգի թողութեամբ (Ղև. 99)։ Զքի թողութիւն (Շիր.)։

Փաստորեն, բառիս իմաստաբարձքային փոփոխությունների այս գործընթացն արդեն տարժամանակյա երևույթ է։ Այս կարգի բառերի իմաստափոխական ուղու հետադոտությունից կարելի է որոշել, թե երբ է բառը երկփեղկվել իմաստաբարձքային դաշտով, մի հանգամանք, որ դժվար է կիրառել նախագրային հայերենի իմաստաբարձքային փոփոխությունները բնութագրելիս։ Իմաստափոխության ու խոսքիմասային արժեքի տեղաշարժերի երևույթը, լեզվի զարգացման միևնույն փուլի շրջանակներում թե դրանից դուրս, միշտ կրում է տարժամանակյա բնույթ. բառերը միանգամից չեն երկփեղկվում բառիմաստով ու խոսքիմասային արժեքով կամ էլ չեն ձևափոխվում տրոհված իմաստից ու արժեքից։ Հայերենի նախագրային շրջանում կատարված իմաստաբարձքային փոփոխությունները նույնպես տարժամանակյա գործընթացի հետևանք են. զրավոր հուշարձանների բացակայություն է խանգարում ցույց տալու այդ գործընթացի պատմական ժամանակաշրջանը։

Առաջացած լինելով նախագրային հայերենում և իբրև ժառանգություն անցնելով հին հայերենի բառային կազմի մեջ՝ այդ բառերը տարածքային արտահայտում են սկզբնաձևային դրությամբ, առանց ձևակազմական փոփոխության։ Այնքանով, որ այդ բառերը կայուն ձևով առկա են հին հայերենի բառային կազմում՝ երկփեղկված բառիմաստներով և խոսքիմասային արժեքներով, դրանք պայմանականորեն անվանում ենք համաժամանակյա եռարժեք բառեր։ Նկատի ունենալով, որ հին հայերենի բառային կազմում առկա է խոսքիմասային եռարժեք բառերի երկու շերտ (ըստ ծագման ժամանակաշրջանի)՝ նպատակահարմար ենք գտնում սույն հոդվածի շրջանակներում տալ միայն համաժամանակյա եռարժեք բառերի իմաստաբարձքային քննությունը⁷։

Համաժամանակյա եռարժեք բառերը հին հայերենում երկփեղկված յուրաքանչյուր իմաստ ու արժեք հիմնականում անխառն արտահայտում են ա-

⁵ Եռարժեք բառերի ծագման ակունքները, որոշ առումով, դարձյալ տանում են նախագրային ժամանակաշրջան. դրանք այն բառերն են, որոնք V դարում արդեն երկարժեք էին (նախագրային ժառանգություն), խոսքիմասային երրորդ արժեքը ձեռք են բերել հայերենի զարգացման գրարարի ենթափուլերում։

⁶ Գ. Զահուկյանը, քննարկելով հնդեվրոպական բառաիմաստային խմբերի հետ հայերենի բառիմաստների ունեցած փոխհարաբերությունը, եղած իմաստային անցումները, հնդեվրոպական մյուս լեզուների համապատասխան խմբերի նկատմամբ հայերենի իմաստների բաշխումը, կատարել է նախահայկական կամ բարբառային շրջանի հայերենի բառիմաստների դասակարգումը ըստ բառաիմաստային (թեմատիկ) խմբերի։ Իմաստաբարձքային փոփոխություններ կրած բառերի նախնական բառիմաստները (և խոսքիմասային արժեքները) մենք ստուգել ենք ըստ այդ բառացանկի (տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 204—222)։

⁷ Հին հայերենի եռարժեք բառերը տարժամանակյա կտրվածքով առանձին քննությունն յուրաքանչյուրը են լինելու։

առանձին էիրառությամբ. տվյալ բնագրում հանդես է գալիս հրանց արժեք-
առանձին սիւսյն մեկը՝ համապատասխան իմաստով ու կիրառությամբ: Մեր
կատարած հետմանախորհրդունքը բույց են տալիս, որ հին հայերենում
այս կարգի բառերը հանդես են գալիս հետևյալ բառարմասային հաստե-
ռումներով՝ գոյական||ածական||մակբայ, ածական||մակբայ||նախադրություն,
մակբայ||նախադրություն||շաղկապ, ածական||մակբայ||շաղկապ (կան նաև
մասնակի այլ դրսևորումներ):

Քննենք խոսքիմասային եռարժեք բառերի համաժամանակյա դրսևոր-
ումները V դարի շրջանակներում:

Ա. Գոյական||ածական||մակբայ խոսքիմասային արժեքներ համատեղող
բառերի երրորդ արժեքը՝ մակբայականը, ձևավորվել է համեմատաբար ուշ
շրջանում. այն հետևանք է գոյական||ածական երկարժեք բառերում հատկա-
նշարին իմաստի ընդլայնման: Իսկ գոյական||ածական երկարժեք բառերի
նախնական խոսքիմասային արժեքը հնարավոր է պարզել ստուգաբանական
եղանակով: Այդպիսի մոտեցման դեպքում կարելի է առանձնացնել եռար-
ժեք բառերի երկու խումբ՝ հիմք ընդունելով տվյալ բառույթի նախնական
խոսքիմասային իմաստն ու արժեքը:

1) Ծնարժեք բառեր, որոնք նախապես ունեցել են գոյականի արժեք:
Գոյականի իմաստաարժեքային փոփոխությունների ճանապարհին ա-
ռարկայի անվանումը կարող է ձևեր բերել առարկայի հատկանիշի իմաստ-
մի իրողություն, որ բնութագրական է հայերենի վարձագման բոլոր գոյա-
կանների: Նախադրային հայերենում ևս խոսքիմասային եռարժեք բա-
ռերը ձևավորվել են այս ուղիով, իսկ մակբայական իմաստն ու արժեքը ճյու-
ղավորվել են տվյալ բառույթի ածականական իմաստից ու արժեքից: Կարե-
լի է ասել, որ գոյականական ծաղումով եռարժեք բառերը ձևավորվել են
գոյ. > ած. > մկբ. փոփոխությունների ուղիով, որովհետև իմաստաարժեքային
փոխանցումների այլ մոդել, ասենք՝ գոյ. > մկբ. > ած., լեզվում մեզ չի հան-
դիպել, և հնարավոր է, չէ այն դիտարկել, քանի որ սովորական է, ինչպես
ասացինք, առարկայի անվան անցումը առարկայի հատկանիշին, քան հատ-
կանիշի հատկանիշ արտահայտելուն:

Այդ բառերից են.

ամուր կազմ կէս սուտ
բուռն կանգուն նախաշաւիղ և այլն:

Դիտարկենք բնագրային կիրառություններ:

Ամուր—1. «ամրոց, աշտարակ, բերդ, պատնեշ. անձալ» (դոյ.). Պա-
տնեցին գամուրս անապատին (Բ Մակ. 32): Հրաման տայ Սմբատայ՝ երթալ
յամուրն Բաշարան (Խոր. 175): 2. «անառիկ, պնդակազմ, հաստատուն»
(ած.). Քաղաքք ամուրք և պարսպաուրք (Թիւք. ԺԳ 29): Որպէս զջուր հեր-
ձեալ զերկաթի ամուր հանգերձն՝ շամփրէ զԱժգահակ (Խոր. 82): 3. «ամ-
րապետ, սնդապետ, հաստատուն» (մկբ.). Մէկին ասել բանին ոչ այնպէս
ամուր հաստատէ զվճիռն: Այսպէս ամուր վառել (ՆՀԲ, 1, 73):

Բուռն—1. «ձեռքի ափ, բուռնցք» (գոյ.)⁸. Որչափ բռամբ մի ալիւր ի
սափորի (Գ Թագ. ԺԷ 12): Առցէ բռամբ քահանայն ի դոհէ յիշատակի նորա
(Թիւք. Ե 26): 2. «հզոր, զորավոր. բռնավոր» (ած.). Ի թիկունս հասանէին
բուռն կազմութեամբ Աղուսնք (Ազաթ. 17): Սէգ իսկ էր բուռն ոսկերօք (Ա-
զաթ. 71): 3. «ուժգին կերպով, բռնությամբ» (մկբ.). Սու ինքեանք իւրեանց
նետիւք լի բարկութեամբ. զայս թշնամեացն բուռն դէպ կալեալ՝ առ հասա-
րակ ի կուրութիւն դարձուցանէին (Բ Մակ. Ժ 30):

Սուտ—1. «կեղծիք, ոչ ճշմարիտ բան, խաբեություն» (գոյ.)⁹. Ի ստույն
զինչ ստուգեսցի (Միրաք. ԼԱ 4): Այլ նա ասէ. «Ոչ առ սուտս ունիմ առ
զձեզ» (Խոր. 346): 2. «ոչ ճշմարիտ. խարդախ, կեղծ, նենգ, անհավատ» (ած.).

⁸ Փոխաբերական առումով գործածվում է «իշխանություն, տերություն» իմաստներով-
հմտ. Ընդ բռամբ արքայի ի սպաս զոհիցն պաշտել զայն (Բ Մակ. Գ 6):

⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 129:

Մի սուտ վկայություն վկայելը (Եվ. Ի 13): Եւ այսոքիկ զրոյցք սուտ և կամ թէ արդարեւ լինալ՝ մեղ չէ ինչ փոյթ (Խոր. 27): 3. «Իզուր տեղը, իզուր» (մկբ.). Սուտ ևրուտան ի կուռսն (Իմաս. ԺԴ 30): Ոչ զիւր ինչ քաջութիւն՝ սուտ հրա- մայեաց մեղ վիպասանել (Ազաթ. 10):

2) Եւ ուրեք բառեր, որոնք նախապէս ունեցել են ածականի արժեք, Ածականն իր խոսքի մասային արժեքով աղերսւում է թե՛ գոյականի, թե՛ մակբայի հետ: Գոյականի հետ նա հարաբերակցւում է մեծ մասամբ փոխա- նուն կիրառութեամբ (հատկանիշը՝ անվան փոխարեն), իսկ մակբայի հետ՝ հատկանշային ընդհանուր հաղափար արտահայտելով (առարկայի հատկա- նիշը՝ գործողութեան կամ հատկանիշի հատկանիշի փոխարեն):

Ածականական ծագումով եւ արժեք բառերի իմաստաարժեքային փոփո- խութիւններն ընթացել են ած. > գոյ. > մկբ. տեղաշարժերի ուղիով: Անցման այս ուղին տարբերակում ենք՝ նշելով V դարի մատենադրութեան մեծ եւ- արժեք գրականութեան յուրաքանչյուր արժեքի շարժումը վիճակագրու- թյունից:

Փոխադրային հայերենում ած. > գոյ. > մկբ. փոխանցումների մոգելով աւաղացել են հետևյալ եւ ուղղակի բառերը.

աւելորդ	իմաստուն	հետեւակ	յայտ	օտար
բաղում	համարձակ	ճարտար	պատշաճ	և այլն:
գիւր	հասարակաց	մեծամեծ	տարածւած	

Դիմենք դրանց բնագրային կիրառութեանը:

Իմաստուն—1. «մտաւորական, գիտուն, հանճարեղ, խելամուտ» (ած.). Առ անտի կին մի իմաստուն (Բ Թագ. ԺԴ 20): Առնել զիմաստուն... արա- րածն ի մէջ անիմաստ արարածոցն (Ազաթ. 135): 2. «իմաստուն այր, իմաս- տասներ, փիլիսոփա» (գոյ.). Լիդու իմաստունաց գիտէ զբարիս (Առաջ. ԺԵ 2): Ի զուր իսկ ջանան իմաստունեմն ճոնաց զԱստուծոյ ճառել (Եզն. 240): 3. «իմաստնական, իմաստութեամբ» (մկբ.). Ջայս գործ ոչ իմաստուն գոր- ծեցիր (Եզ. 62): Ոչ ինչ ըստ Աստուծոյ կամացն վարս յանձն առեալ՝ իմաս- տուն ինչ գնացեալ լինէին (Բուզ. 27):¹⁰

Ճարտար—1. «վարպետ, հմուտ, հաջողակ. հանճարեղ» (ած.). Գրեցես ի նմա գրչաւ առն ճարտարի (Եսայ. Ը 1): Տեսին փայտ կոփեալ՝ ոչ ճար- տար ինչ գործ (Խոր. 233): 2. «քերթող, բանաստեղծ, իմաստասեր» (գոյ.). Ի ձեռս ճարտարաց գովեցի գործ (Միրաք. Բ 24): Մեսրոպ... ոչ զոք ի ճար- տարաց գտանէր անդ ի դպրաց (Խոր. 325): 3. «լավ, հավաստի, քաջ, ստույգ» (մկբ.). Որպէս ինքն միայն ճարտար գիտէ (Եզն. 84): Այլ զի մութն էր, ստիպով ևս գնայր նաւն, ոչ իմացան ճարտար (ՆՀԲ, 2, 175):

Դիւր—1. «հաճելի, դուրեկան, անդորր, դուրին, հեշտ» (ած.). Թերեւս և դիւր իցեն հնարք իրացն կատարածի (Եզ. 84): Բանիւք դիւր է առաքինա- նալ (Ոսկ. Մ Ա 23): 2. «հեշտ, հեշտութեամբ» (մկբ.)¹¹. Ոչ ըմբռնիցիս դիւր յայնպիսի ախտ (Ոսկ. Մ Ա 11): 3. «անդորրութիւն» (գոյ.). Նրգեսցէ քնա- րաւ, և գիւր լիցի քեզ (Ա Թագ. ԺԶ 16): Դիւր արարի նոցա ի կապանացն (Բուզ. 21):

Իսկ «հարթ, ողորկ» ածականական իմաստի միջանկյալ օղակով (Որ եր- բմն դիւր էր և հաստատուն, ՆՀԲ, 1, 629) ձեռք է բերել «հարթավայր, հար- թութիւն» գոյականական նշանակութիւն: Հմտ. Տացցեմք ընդ նոսա պատե- րազմ ի դիւրի (Գ Թագ. Ի 23): Տացուք ընդ նոսա պատերազմ ի դիւրոց (Գ Թագ. Ի 25):

Հաշվի առնելով տվյալ բառի նախնական իմաստն ու արժեքը և ելնել- լով նրա երկփեղկված արժեքների գործառական հաճախականութիւնից՝ կա-

10 Չնայած այստեղ ինչ-և է մակբայական կիրառութիւն ստեղծում:

11 Իմաստային անցման համար հմտ. դիւրեքեկ, «հեշտութեամբ բեկվող՝ թեքվող», դիւրագիտ «հեշտութեամբ գտնվող», դիւրեկեալ «հեշտ ընկալ(վ)ող» և այլն:

րելի է՝ եզրակացնել, որ գոյ. > ած. > մկբ. եռարժեք բառերը ձևավորվել են մեծ մասամբ ածականի, ինչպես նաև գոյականի խոսքիմասային արժեքի արոհման հետևանքով: Ընդ որում ած. > գոյ. > մկբ. մոդելով ավելի շատ բառեր են ենթարկվել իմաստաարժեքային փոփոխությունների: Այդ բառերի երրորդ արժեքը՝ մակբայականը, ևս սերում է նախնական ածականական արժեքից՝ պայմանավորված վերջինիս՝ ընդհանուր հատկանիշի գաղափար արտահայտելու ներուճակով:

Բ. Ածական||մակբայ||նախադրյալն արժեքներ համատեղող բառերը ծագել են հիմնականում ածականի նախնական խոսքիմասային արժեքի երկփեղկումից՝ պայմանավորված բառիմաստի ընդլայնման գործոնով: Այս ճանապարհով նախապես առաջացել են ածական||մակբայ երկարժեք բառերը, իսկ երրորդ արժեքը՝ նախադրականը, ձևավորվել է համեմատաբար ուշ շրջանում՝ ած. || մկբ. երկարժեք բառերի հետագա իմաստափոխության հետևանքով: Իմաստափոխությունը, ազդելով բառերի խոսքիմասային արժեքի վրա, նրանց կարող է նաև զրկել նյութական բովանդակությունից, վերածել սպասարկու բառերի՝ փոխելով դրանց թե՛ բառական իմաստը, թե՛ խոսքիմասային պատկանելությունը: Այս դեպքում բառերը մասամբ կամ լիովին դուրս են գալիս նախկին խոսքի մասի շրջանակներից:

Անցման այս ուղին, որ հատուկ է հին հայերենում ձևավորված եռարժեք բառերին (ած. || մկբ. || նխդր.), տարածելի է նաև նախադրային հայերենում ձևավորված այդ կարգի բառերի վրա. լեզվական մի գոյավիճակում կատարված իմաստաարժեքային փոփոխությունները սկզբունքորեն չեն կարող տարբերվել նույն լեզվի զարգացման նախորդ գոյավիճակում ընթացած համանման իրողության դրսևորումից ու անցման ուղուց: Այս երեք խոսքի մասերն էլ ունեն ձևաբանական ու շարահյուսական արժեքների աղբյուրներ. ածականն ու մակբայը հարաբերակցում են հատկանշային ընդհանուր իմաստով ու պարագայական կիրառությամբ, իսկ նախադրությունը, ծագած լինելով նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերից, այդ թվում նաև ածականից ու մակբայից, իմաստային ու գործառական տեսակետից շփման եզրեր է պահում իր ծագման աղբյուրի հետ:

Խոսքիմասային այս եռարժեք բառերը մեծ մասամբ ձևավորվել են ածականից՝ ած. > մկբ. > նխդր. փոխանցումների ուղիով: Այդ բառերից են.

բացագոյն զատ հակառակ միաբան¹²

գաղտ լուկ մեկուսի և այլն:

Դիմենք այս բառերի բնագրային կիրառությանը:

Գաղտ—1. «գաղտնի, թաքուն, ծածուկ» (ած.)¹³. Վասն զի գաղտ ուխտ իւր և խորհուրդ ընդ թագաւորին Յունաց է (Փարպ. 12): 2. «ծածուկ կերպով, լռելյայն, գաղտնի» (մկբ.). Ըմբռնեսցի, եթէ ոք գաղտ ելանելով դաւել կամիցի զարքայն (Խոր. 165): Որոյ ոչ բարւոյ գործ է, ալ ապիրատի, գաղտ մտանել յայլոց տուն և նենգել նմա (Յզն. 265): 3. «գաղտնի, ծածուկ» (նխդր.), Յորոց ձեռս տար գաղտ յերանելի սպարապետէն Վարդանայ զգրեալսն (Փարպ. 68): Գաղտ ի մօրէն երթայր յեկեղեցին (ՆՃԲ, 1, 524):

Մեկուսի—1. «զատված, որոշված, հեռավոր» (ած.). Թէպէտև մարմնով մեկուսի եմ (Ա Կորն. Ծ 3): Ի կանանց մեկուսի եմք յերկէ և յեռանդէ (Ա Թագ. ԻԱ 25): 2. «հեռու, առանձին, զատ» (մկբ.). Յդին մեկուսի ի տեղի մի (Ա Մակ. Դ 43): Կանգնեցին և վերայ բլրոյն մեկուսի բաժանեալ (Խոր. 233): 3. «բացի, առանց, զատ, ազատ» (նխդր.). Անցեալ մեկուսի ի նոցանէ՝ ելաց Յովսէփ (Սնն. ԽԲ 23): Կործանեաց զպատկերն Արամազդայ, որ կայր մեկուսի ի քաղաքէն (Խոր. 233):

¹² Գ. Ավետիսյանը քննում է այդ կարգի բառերի երկարժեք դրսևորումները միայն, որոնք բուն ածական անուն ըլլալով, նախադրութիւն կըսուէին, իւրաքանչիւր նշանակութեանը յարմար խնդիր մը պահանջելով (տե՛ս Գ. Աւետիսյան, Նշվ. աշխ., էջ 220):

¹³ Տե՛ս Գ. Զահուկյան, Նշվ. աշխ., էջ 220:

Հակառակ—1. «ներհակ, անմիաբան» (ած.). Ամենայն ոք որ թաղաւոր
կուէ՛ղ անձն իւր հակառակ է կայսեր (Յովհ. ԺԹ 12): Այս կառք զարմանա-
լիք ի հակառակ և յանձան երիվարաց լծեալ... ոչ ի հանդէպ երեսացն ևւեթ
արշաւին (Եզն. 18): 2. «ընդդեմ, ներհակ» (նխդր.). Զի՞նք է զի միաբանեցէ՛ք
դու և որդին հակառակ ինձ (Ա. Բագ. Բ 23): Եւ ոչ ինքն յանձնէ շար քտեալ,
և հակառակ Աստուծոյ (Եզն. 51): 3. «ներհակապես» (մկբ.). Արդ հակառակ
և ողորմ միածնին որդիութեան (Ղսկ. 35.):

Մակբայական նախնական արժեքի տրոհումով են առաջացել առաջոյ,
հեռի, մօտ (մատ) և յառաջ խոսքի մասային եռարժեք բառերը, որոնք նա-
խապես արտահայտել են տարածական հարաբերությունն¹⁴: Հմմտ.

Հեռի—1. «հեռու, մեկուսի, շուտ կամ ուշ» (մկբ.). Մի ուրեք հեռի՛ն ձգի-
ցիք երթալ (Ելք. Ը 23): Երուանդ... ճակատէր ոչ հեռի յիւրմէ բանակէն (Խոր.
171)։ 2. «հեռավոր, երկար. օտար, հին» (ած.). Գնացեալ է ճանապարհ
հեռի (Առակ. է 19): Հեռի է Աստուած յամպարշատաց (Առակ. ԺԵ 29):
3. «հեռու, առանց, զատ» (նխդր.). Արդ ել նստաւ Դենշապուհ արտաքոյ
բանակին լատելի, Էւոր երկոտասան հրասախաւ (Եղ. 195):

Մօտ—1. «մերձ, մոտիկ, մոտենալով, մոտեցնելով» (մկբ.). Մօտ եկ, և
շոշափեցից գրեզ (Ծնն. ԺԵ 12): Եւ մօտ անցեալ՝ աջողեռաւ ձգել զսուինն
(Խոր. 107): 2. «մերձ, առնիքի, կից» (նխդր.). Մի աշտօճեցին մօտ ի
լևառնն (Ելք. ԼԳ 3): Նստի սա մօտ առ իս (Թիւք. ԻԲ 5): 3. «մոտավոր»
(ած.). Զանցաւորդ դնեցեր, զոր և զայգ ևս ընդ մօտ աւուրս կորուսանելոց
հս (Եղ. 137), «մոտիկ, մերձ». Թէ իշանեմ ի դժոխս, և անդր մօտ հս (Սաղ.
ՃԼԷ 8):

Ինչպես ցույց է տալիս բառի մաստի պատմական քննությունը, V դ. մա-
հարդակում լիտարկվող ած.՝մկբ.՝նխդր. խոսքի մասային եռարժեք բառերը
առաջացել են ինչպես ածականի, այնպես էլ մակբայի նախնական խոսքի-
մասային իմաստի ու արժեքի տրոհման հետևանքով, որպիսի գործընթացը
հետևանք է բառի մաստի ընդլայնման: Եռարժեք այդ բառերի իմաստաարժե-
քային փոփոխությունները մեծ մասամբ ընթացել են ած. > մկբ. > նխդր. տե-
ղաշարժերի ուղիով:

Գ. Մակբայ||նախադրություն||շաղկապ խոսքի մասային համատեղումնե-
րով հին հայերենում հանդես են գալիս մի շարք բառեր, որոնք արտահայ-
տում են համեմատաբար վերացարկված իմաստներ: Այդ կարգի բառերի
ծագման (տարարժեքության) ակունքները տանում են լեզվի զարգացման
նախագրային ժամանակաշրջան. դրանք ձևավորվել են հիմնականում մակ-
բայից՝ աստիճանաբար ապրելով նյութական բովանդակության վերացարկ-
ման գործընթաց:

Ինչպես ցույց են տալիս հայերենի (և ցեղակից լեզուների) փաստերը, լի-
իմաստ բառերը կարող են վերացարկվել նյութական բովանդակությունից և
վերածվել սպասարկու բառերի՝ փոխելով թե՛ բառի մաստը, թե՛ խոսքի մա-
սային արժեքը, մինչդեռ շատ հազվադեպ կարող է սպասարկու բառերի մեջ
զարգանալ նյութական նշանակություն¹⁵:

Նյութական բովանդակությունից դեպի սպասարկու բառերն անցնելու
ճանապարհին որոշ մակբայներ, հեռանալով մայր խոսքի մասային իմաստից
ու արժեքից, համապատասխան կառույցներում կարող են հանդես գալ ինչ-
պես նախադրության, այնպես էլ շաղկապի արժեքով: Այդ կարգի բառերը,
միայնակ հարելով բային, դիտվում են իբրև մակբայ (մինչև աւարտեաց,
իբրև ուսան, որպէս յաղթեաց), որպես նախադրություն, խոսքի մեջ կատա-

¹⁴ Հմմտ. նույն տեղում, էջ 216:

¹⁵ ... ոչ հեռի ի՛ քառակէն կապակցության մեջ հեռի-ն մակբայ է, քանի որ ունի մակ-
բայական լրացում՝ ոչ (տե՛ս Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությու-
նները, Երևան, 1975, էջ 474—475):

¹⁶ Տե՛ս Լ. Խաչատրյան, Նյութական բովանդակությունից դեպի սպասարկու բառերը
(Հայոց լեզուն և՛ գրականությունը դպրոցում, 1983, № 4):

բում են սպասարկու դեր՝ կառույցներով հանդես դալով իբրև բայական անդամի լրացում (մինչև ի քաղաքն, իբրև զկինամօն, որպէս զլոյս)¹⁷, իսկ արտահայտելով նախադասութիւնների ստորադասական հարաբերութիւններ, օժտւում են շաղկապի արժեքով¹⁸:

Մկր. > նխդր. > շղկպ. իմաստարժէքային փոփոխութիւններն ընթացել են շարահյուսական էրառութիւն հիմքի վրա: Հին հայերենում այս կարգի համատեղումներով հանդես են գալիս հետևյալ բառերը.

իբր իբրու մինչև քան¹⁹
իբրև մինչ որպէս և այլն:

Բնագրային նմուշների հիման վրա ցույց տանք որոշ բառերի խոսքիմասային արժեքների գործառութիւնները:

Իբր—1. չեբբ, մինչդեռ, մինչ (մկբ.). Իբր ոչ քիչ յորմզդի կամ ի յազեն էր զօրութիւնն՝ այլ ի գաւաղանսն (Նզն. 136): 2. Զմիւս որդին՝ թէ ժանտահոտ և խաւարին իցէ, իբր ոչ գիտաց (Նզն. 127): 3. Քիբրև, որպես (նխդր.). Նից գայլոցն իբր զարհամարհեալացն (Խոր. 17): Ի պաշտօն առեալ երկիր պազանիցէ իբր Աստուծոյ (Նզն. 39): 3. Քիբր թե, որպես թե (շղկպ.). Իջեալ անմարմինն՝ իբր զմարմնաւոր ոք ոտնաձայն առնէր ի դրախտին (Նզն. 73): Տիրանայ որբացեալ... զՏրդատ... իբր զինքն ունելով պատճառ սպանման նորա (Խոր. 282)²⁰:

Մինչ—1. մինչդեռ, երբ, տակաւին, որքան ժամանակ (մկբ.). Դարձեալ մինչ երբեմն ոմն սեղեխաբար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առաքաստիդ, և հարսնդ ոչ աղտեղացար (Խոր. 359): 2. մինչև, ց (նխդր.). Նւ աստ կողեցեալ զվայրենի եկամուտ ազգին ի լեռնէն, որ զհարաւով՝ իջեալ մինչ ի դաշտաբերանն (Խոր. 108): Որք մինչ յիրեանց մահն, ցուցանեն ձեզ զճշմարտութիւնն (Բուզ. 34): 3. մինչև, այնպես որ, այնչափ (շղկպ.). Մինչ Գնեւն արքունական բանակին լինէր միջամուխ, ազդ լինէր թագաւորին ևկն նորա (Բուզ. 100): Ցրուեաց զամենեսեան մորիկն, մինչ ոչ գիտել ընկեր զընկեր՝ ընդ որ վարեցաւ (Խոր. 161):

Որպէս—1. չեբտ որում, ինչպես (մկբ.). Որպէս և յառաջագոյն իսկ ասացաք (Նզն. 35): Արդ՝ դարձեալ ձեր յիւրաքանչիւր արարս իշխեցէք, որպէս և ցալթմ (Խոր. 311): 2. Քիբր, նման, հանգույն (նխդր.). Որպէս զսերմըն, բր սերմանես, ոչ այլ ընդ այլոյ գայ (Նզն. 294): Իջցեն որպէս զվէմս ի ջուրս բազումս (Ագաթ. 41): 3. Քինչպես, օրինակ (շղկպ.). Թէպէտ և մեռանիմք, կենդանի եմք, որպէս որդին Աստուծոյ մեռաւ և եկաց՝ և մեզ եցոյց օրինակ կենդանութեան (Ագաթ. 34):

Ինչպես ցույց է տալիս բառիմաստի պատմական քննութիւնը, բառի իմաստարժեքային փոփոխութիւնները կարող են ընթանալ ինչպես նյութական բովանդակութիւն ունեցող խոսքի մասերի՝ անունների սահմաններում [ած. > գոյ. > մկբ. → ած. || գոյ. || մկբ.], այնպես էլ անունների և սպասարկու բառերի միջև [մկբ. > նխդր. > շղկպ. → մկբ. || նխդր. || շղկպ.]:

¹⁷ Տե՛ս Մ. Ս երաստացի, նշվ. աշխ., էջ 190:

¹⁸ Գ. Ավետիքյանը խոսքիմասային տարածքութիւնը տարբերակում է ըստ համապատասխան իմաստների. «մինչ, իբրև թինչպէս» կ'ըլլան նախադրութիւն. կը նշանակեն ալ՝ «եբր որ», ժամանակական մակբայ, մինչ-ը կը նշանակէ ևս՝ «որ», սա մտքով կ'ըսուի շաղկապ համեմատական» (Գ. Աւետիքեան, նշվ. աշխ., էջ 129):

Ավելացնենք, որ մկբ. || շղկպ. արժեքները երբեմն շատ դժվար է տարբերակել անդամ կոնկրետ կիրառութիւն մեջ, որովհետև երկու դեպքում էլ դրանք հարում են բայական անդամին:

¹⁹ ՆՀԲ-ն այս կարգի բառերի խոսքիմասային արժեքները տալիս է նխդր. || մկբ. || շղկպ. հաշորդականութեամբ՝ հավանաբար ելնելով նախադրական արժեքի գործառական հաճախականութիւնից:

²⁰ Իբր արտահայտում է նաև նպատակային հարաբերութիւն (որպեսզի, որ), հմտ. Երդուին խնդրեսցուք ի Հերովդէէ թագաւորէ Հրէաստանի, իբր ընդունել զմեզ և տալ ժառանգութիւն ի բնակ երկրի մերում (Խոր. 140):

Դ. Ածականական մակբայ||շաղկապ խոսքի մասային արժեքների համատեղումով հին հայերենում հանդես են գալիս արդ, համայն և միայն բառերը, ընդ որում արդ-ը տարարժեքության է հանգել մակբայական, իսկ համայն և միայն բառերը՝ ածականական մայր իմաստի ու արժեքի երկփեղկման հետևանքով:

Ածականական արժեքի մասնակի տեղաշարժերի հետևանքով համայն և միայն բառերը համատեղել են ած.||մկբ. արժեքներ. այնուհետև բառույթի տրոհված իմաստային դաշտում ձևավորվել է նաև շաղկապի արժեք՝ մակբայի նշանակության միջանկյալ օղակով: Մակբայ>շաղկապ իմաստաարժեքային անցումը պայմանավորված է մակբայի՝ շարահյուսական մակարդակում շաղկապի դերով հորժածվելու հանգամանքով: Հմմտ.

Համայն—1. «հանուր, բովանդակ, բոլոր, ամբողջ» (ած.). Համայն ազատատոհմիկն զարմիւ (Պիտ.). Բովանդակ մարմնովն, և համայն աստուածութեամբն (ՆՀԲ, 2, 17): 2. «միանգամայն, միաժամանակ, ամբողջովին» (մկբ.). Բաղուս ինչ աստ կարգաց և յօրինուածոց տանց, աղգաց... և համայն ասել՝ օրէն թագաւորութեան (Խոր. 109): 3. «բայց, սակայն» (շղկպ.). Նւ մինչ նոքա զմերն յուսացին զդարձ... համայն և մեք փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ աղգաց ի կերպարանս եկն առ նոսա, համայն և այնպէս յօրինացն մահապարտ էր (Նզն. 268):

Միայն—1. «միակ, միայնակ, առանձին» (ած.). Եղէ ես որպէս ճընճ-դուկ միայն ի տանիս (Սաղ. ԺԱ 8): Սովորութիւն է Հռովմայեցւոց՝ Աստուած ի հրամանէ թագաւորի միայնոյ ոչ նստուցանել (Խոր. 154): 2. «սոսկ, լոկ» (մկբ.). Թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա, փրկիմ (Մատ. Թ 21): Առ որ այսչափ միայն ասացից (Խոր. 12): 3. «միայն թե, բայց միայն» (շղկպ.). Միրով յանձն առցուք զաղքատութիւն... միայն ի բարկութենէս և եթ յայրեսցուք (Փարպ. 53):

Արդ բառի ածականական և շաղկապական արժեքներն առաջացել են մակբայի նախնական արժեքի երկփեղկումից. բառիս իմաստաարժեքային տեղաշարժերն ընթացել են մկբ.>ած.>շղկպ. փոխանցումների ուղիով: Հմմտ.:

1. «այժմ, հիմա, մոտիկից» (մկբ.)²¹. Իսկ արդ եթէ տեսանեմք, զի կիսոցն մորթջ՝ պատուպարան մերկութեան մերոյ լինին (Նզն. 65): Արդ զմի բան զմեր վաղվադակի կատարեա դու (Նզ. 9): 2. «նոր, արդիական, այժմվա» (ած.)²². Սոյնպէս ասէ յարդ ժամանակս սակաւ մնացին ի ժողովորդ անդ (ՆՀԲ, 1, 345): 3. «այսուհետև, ուրեմն, հետևաբար» (շղկպ.). Յայժմ ես քեզ յաշտ արարի, արդ դու ինձ արա (Նզ. 25): Նւ քանզի զամենայն թըշնամանս յաճախեցեր, արդ ես արկից զքեզ ի տանջանս (Ագաթ. 38):

Հին հայերենում խոսքի մասային ած.||մկբ.||շղկպ. արժեքներ համատեղող բառերը համեմատաբար սահմանափակ գործածություն ունեն, քան տարարժեքության մյուս դրսևորումները: Դա կարելի է բացատրել երկու հանգամանքով. կամ ած.>մկբ. խոսքի մասային տեղաշարժերը նախադրային հայերենում չեն հանգել եռարժեքության՝ շաղկապական արժեքի անջատումով, կամ էլ այդ կարգի բառերը բնագրային համապատասխան կիրառություն չեն գտել հին հայերեն մատենադրության մեջ:

Ամփոփենք:

1. Խոսքի մասային տարարժեքությունը քերականական այնպիսի իրողություն է, որտեղ առկա են արտահայտության պլանում (ձևականորեն) չտարբերվող և բովանդակության պլանում (իմաստով) հակադրվող միավորների խմբեր:

2. Ըստ հետադրության (համաժամանակյա կամ տարժամանակյա) մեթոդների՝ նախադրային շրջանի իմաստափոխությունը կարելի է տարբերա-

²¹ Տե՛ս Գ. Զ ա հ ու կ յ ա ն, նշվ. աղխ., էջ 217:

²² Իմաստի անցման համար հմմտ. արդածին ճնորածին, դեռածին, արդատունի ճնորատունի, մատաղատունի:

կել հինհայերենյան իմաստափոխությունից:

3. Նախադրային շրջանից ժառանգված այն նուրբ բառերը, որոնք համապատասխան լատինացիներով և խոսքիմասային արժեքներով առկա են հին հայերենի բառային կազմում, կոչվում են համաժամանակյա տարածք բառեր:

4. Խոսքիմասային հոսքեր բառերը, ծագած լինելով նյութական բովանդակություն ունեցող բառային խոսքիմասային արժեքի տրոհումից, ձևավորվել են միարժեք և երկարժեք հոսքերի փոխարինմանից:

5. Բառային իմաստաարժեքային փոփոխությունները կարող են ընթանալ ինչպես նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերի սահմաններում, այնպես էլ դրանց և ստանդարտ բառերի միջև:

6. V դարի մատենադրության մեջ գործածված խոսքիմասային հոսքեր բառերը համապատասխան բառիմասային և քերականական արժեքներով ունեն հետևյալ դրսևորումները՝ ա) շոյ. || ած. || մկբ., բ) ած. || մկբ. || նխդր., գ) մկբ. || նխդր. || շոյ. || մկբ., դ) ած. || մկբ. || շոյ. || մկբ.:

7. Կան խոսքիմասային հոսքերում V դարի գրականության հետևյալ համաժամանակյա շրջանի համաժամանակյա բառեր:

ԱՊՐԱՆՈՒՄ ԲԱՐՈՋԱՆԱԳՐԱԿԱՆ

Աղաթ.—Աղաթանդակայ Պատմություն Հայոց, Տփլիս, 1809:

Բուլ.—Փաստաբան Բուլանյանի Փաստաբան Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887:

Եղն.—Եղնիկ Կոզմանյան Եղն աղանդի, Վենետիկ, 1826:

Եղ.—Եղիշ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Եր.—Մովսիս Երևանցի Պատմություն Հայոց, Տփլիս, 1913:

Կոլ.—Կիրիլ Երևանցի Կոլումբենյան (ըստ նշմ-ի):

Ղե.—Պատմություն Ղևոնդի մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1837:

ՆՂԲ.—Նոր բառերը հայկազան լեզուի, Հ. Ա.-Բ., Վենետիկ, 1826—1837:

Շիր.—Անանիայի Շիրակացի Գիրք աստվարաշխութեան (ըստ նշմ-ի):

Ոսկ. ՅՏ. Մ.—Յովհաննու Ոսկերեքանի Մեկնություն.... (ըստ նշմ-ի):

Պիտ.—Յաղապս Պիտոյից (ըստ նշմ-ի):

Փարպ.—Ղաղարայ Փարպեցի Պատմություն Հայոց, Տփլիս, 1904:

Ս. Գրքի համառոտագրությունները գործածված են հայագիտության մեջ ընդունված կորդով, Այսպես, Առակ.—Առակը Սողոմոնի, Ա. Մակ.—Մակաբայցից գիրք Ա, Ա. Թագ.—Գիրք Թագաւորական Ա և այլն:

МОРФОЛОГИЧЕСКИ ТРЕХВАЛЕНТНЫЕ СЛОВА В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ (Опыт синхронного исследования)

Л. М. ХАЧАТРЯН

Р е з ю м е

Семантические изменения слов могут влиять и на их морфологическую значимость: слово приобретает морфологическую полисемию, или же подвергается полному частеречному переходу.

Слова первого типа могут совмещать несколько частеречных значений. В древнеармянском языке они проявляют двух-, трех- и даже четырехвалентность. Морфологически трехвалентные слова в древнеармянском могут быть рассмотрены в двух аспектах: синхронном и диахронном.

В синхронном плане морфологически трехвалентные слова считаются наследием дописьменного периода развития армянского языка: они свое расщепленное лексико-грамматическое значение выражают

в конкретном контексте. Морфологически трехвалентные слова в древнеармянском совмещают следующие частеречные значения:

- а) сущ./прил./нар.—*աճառ* крепость; крепкий; крепко;
- б) прил./нар./предл.—*դադա* тайный; тайком; втайне;
- в) пар./предл./союз.—*մինչ* пока; до; пока/мест/;
- г) прил./нар./союз.—*միայն* одинокий; наедине; только, лишь.

Морфологически трехвалентные слова произошли от имен и образовались путем частеречных переходов от одновалентности к двух- и трехвалентности.